ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
ДОКЛАДЫ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ REPORTS
Հատոր Том Volume 105 2005 № 2

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՈՒԴ 725

Ակադեմիկոս Վ. Մ. Հարությունյան

Վաղմիջնադարյան Հայաստանի պալատական համալիրների հորինվածքային ու կոնստրուկտիվ համակարգերի օրինաչափությունները

(Ներկայացված է 27/ IV 2004)

Հայկական ճարտարապետության հայ և օտարազգի հետազոտողները գիտական շրջանառության մեջ ընդգրկել են հիմնականում եկեղեցական ճարտարապետությունը: Թեև, իրոք, այն գերակշիռ է ու բազմահարուստ, սակայն հայ ժողովրդի բազմադարյա շինարարական գործունեությունը իրականում առավել լայն և ընդգրկուն է եղել:

Նկատի ունենք ամրոցներն ու դղյակները, պաշտպանական համակարգերը, թագավորական, իշխանական և կաթողիկոսական պալատները, կիսահոգևոր-կիսաաշխարհիկ գավիթներն ու ժամատները, կարավանատներն ու կամուրջները, բաղնիքներն ու կոմունալ այլատիպ շենքերը, հյուրատներն ու վաճառատները, առավել չափով՝ հայկական ժողովրդական տան տարատեսակները:

Թորոս Թորամանյանը հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրման առաջին նախաձեռնողներից է: Նրա հետազոտությունների ոլորտն ընդգրկել է Բագրատունիների պալատը Անիի միջնաբերդում, հյուրատունը կամ վաճառատունը, Անիի քաղաքամիջում, կաթողիկոսական պալատը Զվարթնոցում, Ախուրյան գետի վրա ձգված Անիի ու այլ կամուրջները, որոշ դիտարկումներ է կատարել հայկական ժողովրդական բնակելի տների վերաբերյալ:

Խորհրդային ժամանակաշրջանում, երբ Հայաստանում ծավալվեցին հնագիտական պեղումներ, դրանց հայտնագործությունների մասը կազմեցին աշխարհիկ ճարտարապետության հուշարձաններ, մասնավորապես՝ արքունական ու կաթողիկոսական պալատներ Դվինում, Ավանում և Արուճում: Հնագետներ Կարո Ղաֆադարյանը, Արամ Քալանթարյանը, հայ ճարտարապետության պատմաբաններ Նիկոլայ Տոկարսկին, Հովհաննես Խալփաղչյանը, տողերիս հեղինակը, Ստեփան Մնացականյանը, Կորյուն Ղաֆադարյանը և այլոք, արժեքավոր աշխատություններ հրատարակեցին՝ նվիրված ժամատներին կամ գավիթներին,

արքունական և կաթողիկոսական պալատներին, կարավանատներին ու կամուրջներին, կոմունալ սպասարկման շենքերին, հյուրատներին ու վաճառատներին, Հայաստանի ժողովրդական բնակելի տներին:

Անձամբ մասնակցելով Դվինի և Արուճի կաթողիկոսական և իշխանական պալատների պեղումներին և ուսումնասիրելով Զվարթնոց տաճարի համալիրի մասը կազմող կաթողիկոսական պալատը՝ դրանց համադրման տվյալներով հրատարակել եմ աշխատությունների շարք [1]:

Աղյուսակ 1

Պալատը	Կառուցման ժամանակը, դար	Ներքին չափերը	Կողմերի հարաբերությունը	Սյուների քանակը, զույգ	Միջսյունային հեռավորություն
Դվինի Արշակունյաց գահադահլիճը	IV	12.5 × 28.9	1 : 2.31	4	7.10 - 7.10
Դվինի կաթողիկոսական պալատը	V	11.5 × 28.9	1 : 2.34	4	7.25 - 7.30
Դվինի կենտրոնական թաղի պալատը	VI - VII	12.1 × 21.8	1 : 1.80	3	8.05 - 8.40
Զվարթնոցի պալատը	VII	8.8 × 16.1	1 : 1.83	4	3.30 - 4.97
Արուճի պալատը	VII	11.35 × 21.31	1 : 1.87	3	7.55 - 7.55

Ներկայացվող աղյուսակների տվյալները կատարված ուսումնասիրությունների արդյունք են և համեմատական վերլուծություններ կատարելու հնարավորություն են ընձեռնում:

Աղյուսակ 2

Խարիսխների չափերը, սմ	Դվինի Արշակունյաց գահադահլիճը	Դվինի կաթողիկոսական պալատը	Դվինի կենտրոնական թաղի պալատը	Զվարթնոցի պալատը	Արուճի պալատը
Խարիսխասալի չափերը	40.0 × 40.0	100 × 100	110 × 110	60 × 60	102 × 102
Խարիսխասալի բարձրությունը	-	51.5	40.0	33.0	37.0
Բարձիկի բարձրությունը	-	45.3	28.0	19.0	36.0
Ընդհանուր բարձրությունը	-	98.8	68.0	52.0	73.0
Սյան բնի տրամագիծը	-	78.0	64.0	47.0	87.0



Նկ 1. 1. Դվինի Արշակունյաց պալատ, 2. Դվինի կաթողիկոսական պալատ,
3. Դվինի երկրորդ պալատ, 4. Զվարթնոցի պալատ, 5. Արուճի պալատ,
6. Զվարթնոցի կաթողիկոսական պալատի գահադահլիճի ներքնատեսքը,
7. Դվինի կաթողիկոսական պալատի ներքնատեսքը:



Նկ 2. 1. Դվինի կաթողիկոսական պալատի խոյակի վերակազմություն,
2.Արուճի պալատի խոյակի վերակազմություն, 3. Արուճի պալատի խոյակի
չափագրություն, 4. Դվինի պալատի խոյակը, 5 Արուճի պալատի խոյակը,
6. Դվինի երկու պալատների սյուների խարիսխները, 7. Զվարթնոցի պալատի
սյուների խարիսխները

Օրինաչափ ընդհանրություններ առկա են նաև սյուների խարիսխներում, որոնց տվյալները ներկայացվում են 2-րդ աղյուսակում:

Բոլոր խարիսխները երկմաս են՝ բաղկացած քառակուսի ներքնասալից ու դրա սահմաններում գծագրվող շրջանաձև բարձիկից՝ տորից: Խարիսխների չափերին համապատասխանում են սյուների տրամագծերը:

Քննարկման ենթակա պալատական սյունազարդ դահլիճների ճարտարապետության առավել հետաքրքիր բաղադրիչները սյուները պսակող քարակերտ խոյակներն են՝ իրենց ուրույն ծավալաձևերով, չափերով ու մշակման եղանակով:

Դվինի (մեկ) և Արուճի (երկու) խոյակները միատիպ են, երկմաս, բաղկացած բուն խոյակից ու վերնասալից (աբակից): Մշակված ու քանդակազարդ է միայն սյունազարդ դահլիճի միջին նավի կողմն ուղղված երկայնական ճակատը: Թիկունքի կողմերը հարթ են, իսկ կողքերից ծավալային մշակում ունեն: Վերնասալի ողջ երկարությամբ 30 սմ լայնությամբ փորվածք կա, ամենայն հավանականությամբ, փայտյա գերանների՝ մարդակի տեղադրման համար: Քարակերտ խոյակների չափերը ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

	Խոյակների գտնվելու վայրը	Ընդհանուր երկարությունը, մ	Բարձրությունը, մ	Հաստությունը, մ	Խոյողի տրամագիծը, մ
1.	Դվին	2.05	0.90	0.70	0.70
2.	Արուճ (մեծ)	2.20	0.98	0.75	0.72
3.	Արուճ (փոքր)	1.86	0.98	0.75	0.68
4.	Զվարթնոց	1.20	0.47	-	0.38

Խոյակների ճակատները հիմնականում միանման մշակում ունեն: Աջ և ձախ կողմերում տեղադրված են արմավենու ոլորահյուս ճյուղերով քանդակազարդ խոյակներ, որոնց կողմնաճակատները (ինչպես հունա-հռոմեական հոնիական խոյակներին հատուկ բարձիկներում) լոկ ծավալային մշակում ունեն:

Առանձնապես ակնհայտ են երկու խոյակների միջև գտնվող հարթությունների քանդակապատումները: Դվինի խոյակում երկու խոյողների արանքի հարթությունը մշակված է արմավի երկու ուղղաձիգ տերևների միջև տեղավորված խաչով և Արուճի մեծ խոյակում՝ համանման է, իսկ փոքրում՝ տարբեր: Խոյակների վերնասալերի ճակատների քանդակազարդման մոտիվները երեք խոյակներում նույնպես տարբեր են, ինչը վկայում է դրանց կերտման՝ տարբեր ժամանակների պատկանելու մասին[1]:

Վերոհիշյալ քարակերտ խոյակների ծավալաձևերն ու ճակատների մշակումները, մեր կարծիքով, սերվում են հայկական ժողովրդական բնակելի տները Սողոմաքաշ կամ Հազարաշեն կոչված փայտակերտ ծածկերի հենարան ծառայած փայտե սյուները պսակող նույնպես փայտակերտ խոյակները, որոնք մեծ մասամբ, միայն ճակատային կողմերում, նույնպես քանդակազարդ են: Միջնադարից մեզ հասած այդպիսի փայտակերտ երկու խոյակների հազվագյուտ նմուշները պատկանում են Սևանա վանքի Սուրբ Առաքելոց եկեղեցու գավթին (այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում):

Քարակերտ և փայտակերտ խոյակների համեմատական քննություն հանգեցնում է այն համոզման, որ միջնադարյան Հայաստանի պալատական ճարտարապետությունը սնվել է հարազատ ակունքներից, ստեղծել քարա-փայտային հորինվածք, որն իր հերթին վկայում է հայկական շինարվեստում փայտից քարին անցնելու կարևոր փուլը:

Քարե սյուների վրա փայտյա գերաններով ծածկի կիրառության օրինակներ հիշատակվում են հունա-հռոմեական ժամանակներում: Ինչպես հայտնում է ճարտարապետության նշանավոր պատմաբան Օգյուստ Շուազին, «հեծանը (արխիդրավը), որ կրում է անտաբլեմենտի վերին մասի ծանրությունը, արխաիկ տաճարներում փայտից էր, Օլիմպիայի Հերայոնում քարե սյուների վրա հանգչում էր փայտյա հեծանը» [2]:

---

[1] Զվարթնոցի պալատի սյունազարդ դահլիճի խոյակի նույնատիպ լինելը վկայում է տեղում գտնված խոյակի բեկորը:

Անտիկ ճարտարապետության տեսաբան Մարկ Պոլիոն Վիտրուվիի հիշատակությամբ, իր կառուցած Ֆանոյի բազիլիկում սյուները ծածկված էին փայտե գերաններով [3]:

Բերված օրինակները վերաբերում են հունական և հռոմեական ճարտարապետության զարգացման այն փուլին, երբ տեղի է ունեցել անցում փայտից քարին՝ դեռևս պահպանելով փայտակերտ կոնստրուկտիվ համակարգ: Նույնի օրինակներ հայտնի են աշխարհի տարբեր երկրներում, նաև Հայաստանում: Մեզանում անցման գործընթացը տեղի է ունեցել ավելի ուշ՝ վաղ միջնադարում (IV-VII դդ.):

Այժմ անդրադառնանք պալատների սյունազարդ դահլիճների ծածկերի հարցին: Թեև ըստ Ն. Տոկարսկու վարկածի, Դվինի կաթողիկոսական պալատի կենտրոնում եղել է ոչ թե սյունազարդ ծածկված դահլիճ, այլ պարագծերով սյունազարդ բակ, սակայն հետազոտողների մեծ մասը (Վ. Հարությունյան, Կ. Ղաֆադարյան և Հ. Խալփաղչյան) գտնում են, որ այն ծածկված է եղել փայտակերտ համակարգով՝ Սողոմաքաշ կամ Հազարաշեն կոչված հորինվածքով:

Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճի որոշ հատկանիշներ (միջսյունային տարածության չափերը, նրանց հավասարությունը լայնական և երկայնական ուղղություններում, խոյակի ձևը, նրա վերնասալի վրա երկայնական փոսի առկայությունը և այլն) հիմք են տվել եզրակացնելու, որ սյունազարդ դահլիճը եղել է փայտածածկ[2]: Դրա վրա են հիմնված դահլիճի՝ իմ կազմած երկայնական կտրվածքն ու ներքնատեսքը ներկայացնող գծագրերը:

Այսպիսով՝

1. Վաղմիջնադարյան հայկական ճարտարապետությունը զարգացել է տիպաբանական օրինաչափություններ մշակելով ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ շենքերի հորինվածքներում:
2. Պալատական շենքերի բաղկացուցիչ մասն են կազմել չորս կամ երեք զույգ սյուներով դահլիճները: Դրանցից առաջինի թվին են պատկանում Դվինի միջնաբերդի գագաթին պեղված Արշակունյաց գահադահլիճը և քաղաքի կենտրոնում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի կողքին կառուցված կաթողիկոսարանի շենքը: Նույն հատկանիշներով, սակայն, երեք զույգ սյուներով, համանման են Դվինի կենտրոնական թաղի և Արուճի պալատի սյունազարդ դահլիճները: Վերը նշվածների համեմատությամբ որոշ տարբերություններ առկա են Զվարթնոցի պալատում: Բոլորին էլ հատուկ են սյուների տեղաբաշխման, նրանց միջև հեռավորությունների, խարիսխների և խոյակների ձևերում և ծածկերի կոնստրուկտիվ համակարգերում կիրառված որոշակի օրինաչափություններ:
3. Վաղմիջնադարյան Հայաստանի պալատական ճարտարապետությունը կազմավորվել է փայտից քարին անցնելու փուլում՝ ղեկավարվելով ազգային ժառանգության ստեղծագործական շարունակման-կատարելագործման սկզբունքներով:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

[2] Դվինի կաթողիկոսարանի պեղման ժամանակ սյունազարդ դահլիճում գտնվել են փտած գերաններ:

Академик В. М. Арутюнян

Закономерности в композиционных и конструктивных системах дворцовых комплексов раннесредневековой Армении

Для раннесредневекового зодчества Армении характерно развитие не только церковных композиций, но и светской архитектуры, в частности, дворцовых комплексов, составной частью которых являлись колонные залы с четырьмя (дворец Аршакидов в верхней части цитадели Двина и дворец католикоса в центре города, рядом с соборным храмом Св. Григория) или тремя (дворцовые комплексы в центральном квартале Двина и в Аруче) парами колонн. Несколько отличается от них дворец католикоса в комплексе храма Звартноц.

Колонны, их базы и капители в колонных залах всех дворцовых комплексов были каменными, а перекрытия деревянными. Определенные закономерности наблюдаются в расстановке колонн, формах баз и капителей, системе покрытия колонных залов, которые, вместе взятые, знаменуют важный этап раннесредневековой архитектуры Армении - переход от дерева к камню; сохраняются и развиваются народные традиции.

Academician V. M. Harutyunyan

Compositional and Constructive Regularities in Armenian Palatine Architecture of Early Medieval Times

In the early medieval Armenian architecture there were developed not only ecclesiastical building types but secular ones as well. Such are the palatine complexes, the main consisting parts of which are the halls of columns having 3 or 4 pairs of pillars at the center.

First instances of the indicated halls are met in the capital Dvin as the Crown-Hall of Arshakid kings at the palace on the top of the citadel, as well as in the Catholic palace at the down town near the Cathedral of St. Gregory.

The same architectural features are notable at the palatine complexes in the central part of Dvin and Aruch. Both of them have three pairs of columns at the center. By the same properties with slight differences it could be described the Catholic palace at Zvartnots church complex. Actually there are certain generalities in the architecture of the mentioned halls, they are: the shafts, the capitals, and the bases of the columns built up of stone and the gabled roofs. Identical are the distances between the columns, the forms and dimensions of the capitals, the garret windows of the roofs, etc. This all signified an important phase of early medieval Armenian architecture as a transition period from timber to stone technique of building tradition derived from popular sources.

Գրականություն

1. *Арутюнян В. А* - Труды ЕрПИ им К.Маркса. 1947. N 8; *Հարությունյան Վ. Մ.* - ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր հաս. գիտ. 1953, h. 8, էջ 53-64; h. 12, էջ 46-60; Հորինվածքային օրինաչավություններ վաղմիջնադարյան պալատական շենքերի ճարտարապետության մեջ, 1988; *Haroutjunian V. M.* - Lois Zegissant les compositions de l'architecture palatine du Haut Moyen Age. Venezia. 1992.
2. *Шуази О.* История архитектуры. М. 1931. Т. 1. 238 с.
3. *Витрувий.* Кн. V. Гл. V. М. 1963. С.94